ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 7-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի նիստ, ուր Նրա առաջարկով արձանագրվում է, իր անմիջական հրաժեշտության ներքո, «Արտաքին հարաբերությունների բաժին»-ի կազմումը։ Բաժնի վարիչ է նշանակվում տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը և ընդհանուր քարտուղար՝ հոգևոր ճեմարանի դասախոս Պ. Շահբազյանը։

Գերագույն հոգևոր խորհրդի նիստում գոհունակությամբ արձանագրվում է Վեհափառ Հայրապետի սույն որոշումը։ Հաստատում է նաև «Արտաքին հարաբերությունների բաժին»-ի գործունեության ծրագիրը։

Գերագույն հոգևոր խորհուրդը իր սույն նիստում հաստատում է Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակը նշելու համար Մայր Աթոռում կենտրոնական հանձնաժողովի հետևյալ կազմը՝

Պրոֆ. Առաքել Առաքելյան.
Տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյան.
Սարգիս Մելիքսեթյան.
Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ.
Տ. Նարեկ վրդ. Շահարյան (միաբան Մայր Աթոռի).
Արքուն Հատիտյան (խմբագիր «Էջմիածին» ամսագրի).
Սամվել Անթոնյան (դասախոս հոգևոր ճեմարանի)։

Գերագույն հոգևոր խորհուրդը հանձնաժողովի վրա պարտականություն է դնում՝ կազմել և հաջորդ ժողովին ներկայացնել Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակի առթիվ կազմակերպվելիք հանդիսությունների ծրագիրը։

Վեհափառ Հայրապետը արդեն գրել է Իր հունվար 22 թվակիր կոնդակը՝ նվիրված Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակին, որի գեղարվեստական ձևավորումը կատարել է հայտնի նկարիչ, ակադեմիկոս Գր. Խանջյանը։ Հայրապետական կոնդակը տպագրվել է ամսագրի սույն համարի առաջին էջում։

Սույն կոնդակից տպագրվել է նաև 600 օրինակ, կավճապատ թղթի վրա, գեղարվեստական գեղեցիկ ձևավորումով և ուղարկվել է նվիրապետական Աթոռներին, թեմերին, ազգային-եկեղեցական մարմիններին, հայ մամուլին։

1969 թ. հոկտեմբերի 12-ին, Ս. Թարգմանչաց վարդապետների օրը, Մայր Աթոռում նշվելու է անմահ Կոմիտասի ծննդյան 100-ամյակը։

* * *

Փետրվարի 8-ին, շաբաթ.—Երեկոյան ժամը 6-ին Վեհարանի շքեղ հանդիսասրահում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի է ունենում գրական-գեղարվեստական երեկո՝ նվիրված տաղանդավոր բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 50-ամյակին։

Հանդիսությունը բացում է հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը։

Հոգևոր ճեմարանի Ա լսարանի մի խումբ սաներ արտասանում են Սիլվա Կապուտիկյանի բանաստեղծություններից։

Հոբելյարի կյանքի և գրական գործունեության մասին բովանդակալից զեկուցումով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի դասախոս Գր. Գյուլյանը։

Հանդեսի վերջում, մեծարման այս երեկոյի առթիվ, Վեհափառ Հայրապետին շնորհակալության և երախտագիտության ջերմ խոսք է ասում հոբելյար-բանաստեղծուհին և վերջում արտասանում իր բանաստեղծություններից։

Հանդիսության գեղարվեստական բաժնին իրենց մասնակցությունն են բերում Գ լսարանի ուսանող Հակոբ, Հովհաննես, Արարատ և Բ լսարանի ուսանող Վարդան սարկավագները։

*
* *

Փետրվարի 9-ին, կիրակի.—*Մայր տաճարում պատարագում է արժ. տ. Հովհաննես քհն. Մարուքյանը։*

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը։

*
* *

Փետրվարի 13-ին, հինգշաբթի.—*Այսօր Մայր Աթոռ վերադարձավ՝ Երևանի 4-րդ բուժ. միավորման հիվանդանոցում երիկամային հաջող գործողության ենթարկվելուց հետո, Մայր Աթոռի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը։*

*
* *

Փետրվարի 14-ին, ուրբաթ.—Տեառնընդառաջ.

Մայր տաճարում պատարագում է հոգ. տ. Օշին վրդ. Նիկոլյանը և քարոզում՝ «Մարմնացեալդ ի կուսէն» բնաբանով։

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը։

*
* *

Փետրվարի 16-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Մեծ պահոց առաջին կիրակին է։ Մայր տաճարում, փակ խորանի ետև, պատարագում է արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը։ «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը՝ «Խօստովան եղերուք Տեառն» բնաբանով։

*
* *

Փետրվարի 17-ին, երկուշաբթի.—*Ժամը 1-ին հոգևոր ճեմարանում տեղի է ունենում մանկավարժական ժողով, որին մասնակցում են բոլոր դասախոսներն ու ուսանողները։*

Տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը խոսում է կիսամյա քննությունների արդյունքների մասին՝ հայտնելով իր գոհունակությունը ձեռք բերված ուսումնական հառաջադիմության համար։ Ելույթ են ունենում նաև դասախոսներից ոմանք և նշում հոգևոր ճեմարանի ուսումնա-դաստիարակչական աշխատանքները էլ ավելի արդյունավետ դարձնելու միջոցառումները։

*
* *

Փետրվարի 19-ին, չորեքշաբթի.—*Այսօր, առավոտյան ժամը 8-ին, Մայր տաճարում կատարվում է հանդիսավոր Արևագալի ժամերգություն՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Հայրապետի։ Ժամերգությանը ներկա են լինում հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի աշխատավորությունը և պաշտոնեությունը։*

*
* *

Փետրվարի 20-ին, հինգշաբթի.—*Մայր Աթոռում մեկ ամիս ուխտավորաբար մնալուց հետո, կրկին իր պաշտոնատեղին է մեկնում հոդ. տ. Օշին վրդ. Նիկոլյանը։*

*
* *

Փետրվարի 21-ին, ուրբաթ.—*Այսօր, հավարտ երեկոյան խաղաղական ժամերգության, Մայր տաճարում կատարվում է հանդիսավոր հանգստյան ժամերգություն, որին ներկա են լինում բազմաթիվ հավատացյալներ։*

Նույն օրը, երեկոյան ժամը 6-ին, ուսանողների համար հոգևոր ճեմարանի հանդիսասրահում դպրոցական առողջապահության հարցի շուրջ շահեկան դասախոսություն է կարդում բժիշկ Ս. Տեր-Ստեփանյանը։

*
* *

Փետրվարի 22-ին, շաբաթ.—*Այսօր, երեկոյան ժամը 8-ին, հոգևոր ճեմարանի տեսչի ղեկավարությամբ ուսանողները լինում են Վեհարանում, ուր Ն. Ս. Օծությունը նրանց գեղեցիկ և բովանդակալից հորդորական է խոսում՝ Մեծ պահքի հոգևոր և բարոյական նշանակության մասին։*

*
* *

Փետրվարի 27-ին, հինգշաբթի.—*Երեկոյան ժամը 6-ին Վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը։*